**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՆՏԱՌԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Անտառաշեն համայնք

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 հունվարի 2021 թվականի N 1-Ն

## ԱՆՏԱՌԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 Թ-Ի ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն ՀՀ "Բյուջետային համակարգի մասին" օրենքի 33-րդ հոդվածի և առաջնորդվելով Անտառաշեն համայնքի ավագանու 22.01.2021 թ-ի "Անտառաշեն համայնքի ավագանու 2020 թ-ի "Անտառաշեն համայնքի 2021 թ-ի բյուջեն հաստատելու մասին" թիվ 24-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մաիսն" թիվ 2-Ն որոշմամբ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Հաստատել համայնքի 2021 թ-ի բյուջեի եկամուտների և ծախսերի եռամսյակային բաշխումը;

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ԽԱՌԱՏՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՆՏԱՌԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Անտառաշեն համայնք

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 հունվարի 2021 թվականի N 2

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՆՏԱՌԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 14.12.2020թ. թիվ 01/107.4/11994-2020 գրությունը և 11.12.2020 թ-ի թիվ 1074-Ա որոշումը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 12 կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, 41-րդ հոդվածով,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հաստատել "Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Անտառաշեն համայնքի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2021 թվականի հիմնական միջոցառումների" պլանը՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Անտառաշեն համայնքի ղեկավարի օգնականին՝ ապահովել սույն որոշման ծանոթացումը կատարողներին:

3.Սույն որոշման 1-ին կետով հաստատված պլանի միջոցառումների կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Անտառաշեն համայնքի ղեկավարին:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ռ Խառատյան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՆՏԱՌԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Անտառաշեն համայնք

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

22 հունվարի 2021 թվականի N 3

ԱՆՏԱՌԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ 2020 Թ-Ի ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԵՐԹԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածով և ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2009 թ-ի հունվարի 19-ի N 03-Ն հրամանի հավելվածի 20-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝

1.Հաստատել Անտառաշենի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների 2021 թ-ի ամենամյա արձակուրդների տրամադրման հերթականությունը /նախնական գրաֆիկը/.

Խառատյան Ռաֆիկ՝ համայնքի ղեկավար – հունիս

Հարությունյան Քրիստինե՝ ղեկավարի օգնական – օգոստոս

Մակարյան Մերի՝ առաջատար մասնագետ-հաշվապահ – սեպտեմբեր

Բիրյուկով Սերգեյ՝ վարորդ - հոկտեմբեր

2.Սույն հրամանի մասին տեղեկացնել աշխատակազմի վերոհիշյալ աշխատակիցներին:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ռ.Խառատյան**